# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ՄՈՍԿՎԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԻՐԻԼ Ա-Ի ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ-ԻՆ՝ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ
Ծայրագույն Պատրիարք եւ
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր մեր ի Քրիստոս,

Անկեղծ սրտով շնորհավորում ենք Ձեզ՝ Հայաստանի Լուսավորիչ Սուրբ Գրիգորի աթոռին Ձեր գահակալման տասնամյակի առիթով:

Համայն քրիստոնյա աշխարհին են ծանոթ բազմամիլիոնանոց Հայ սփյուռքի համախմբանն ուղղված Ձեր ջանքերը : Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պետի գավազանը Ձեզ է փոխանցվել Հայոց պատմության մեջ շատ դժվար մի ժամանակահատվածում, ինչը Ձեզանից պահանջեց առավելագույն անձնվիրություն, իմաստություն եւ հերոսություն՝ Հայաստանում եկեղեցական կյանքի զարթոնքն ապահովելու համար:

Ձեր Քահանայապետական ծառայության տարիներին մեր Եկեղեցիների ու ժողովուրդների միջեւ առկա բարեկամական հարաբերությունները որակական նոր փոփոխություններ կրեցին եւ ձեռք բերեցին զարգացման մի նոր ընթացք: Երկու եկեղեցիների միջեւ ակտիվ երկխոսությունն ընթանում եւ զարգանում է ամենատարբեր ոլորտներում, բայց նախ եւ առաջ՝ քրիստոնեական ավանդական արժեքների պաշտպանության եւ պահպանման հարցում: Հավատացած ենք, որ ապագային նույնպես, Ձեր ջանքերի շնորհիվ, երկու Եկեղեցիների փոխհարաբերությունները կնշանավորվեն սիրո եւ եղբայրական փոխըմբռնման ոգով: Միշտ ուրախ ենք Ձեզ հյուրընկալելու եւ մեծապես գնահատում ենք մեր անձնական ջերմ հարաբերությունները:

Ձերդ Սրբություն, մեր մաղթանքն է, որ ամենակալն Աստված Ձեզ միշտ օգնական լինի Ձեր բարձր ծառայության մեջ եւ պարգեւի քաջառողջություն, խաղաղություն եւ գործոց հարանոր հաջողություններ: Թ-ող Աստծո ամենակալ Աջը պահպանի Ձեզ հավիտյանս հավիտենից:

Առ Աստված սիրով

ԿԻՐԻԼ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԳՐԵՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տասնամյակի առիթով Նորին Սրբությանը շնորհավորական ուղերձ է հղել Հռոմի Սրբազան Քահանայապետ Բենեդիկտոս ԺԶ Պապը:

Ուղերձում ասվում է.

«Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ, եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ» (Գաղ. Ա 3):

Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ձեր ընտրության եւ գահակալման տասնամյակի ուրախալի առիթով այսու Ձերդ Սրբությանն ենք փոխանցում մեր եղբայրական ամենաջերմ զգացումները:

Փառք ենք տալիս Աստծուն այն օրհնության համար, որ Նա տվել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն՝ Ձերդ Սրբության ծառայության միջոցով: Մեզ հայտնի է նաեւ Ձեր անձնական նվիրումը Հայ Առաքելական եւ Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ երկխոսության, համագործակցության եւ բարեկամության հանդեպ, ինչը բազմիցս դրսեւորվել է մեր փոխադարձ հանդիպումների ընթացքում: Աղոթում ենք, որ մեր միջեւ հաստատված բարի հարաբերությունները շարունակեն աճել գալիք տարիներին:

Անցած դարավերջում Հայոց Եկեղեցու վերագտած ազատությունը ուրախություն պատճառեց համայն աշխարհի քրիստոնյաներին: Եկեղեցական կյանքը վերակառուցելու հսկայական աշխատանքն ընկավ Ձերդ Սրբության ուսերին: Նման կարճ ժամանակահատվածում ձեռքբերվածն իրոք նշանակալի է. նոր նախաձեռնություններ, երիտասարդների քրիստոնեական դաստիարակության,